

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՈՑ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔԸ

Քաղաքապետական ժողովի վերջին նիստին մէջ կարգադրեցաւ Բ. Գոմիսարովի անդամ ընդհ. քարտուղարութեան կողմէ դրուած գիրքը, որով կ'առաջարկուէր Նահրի չըջա-կայքը շինուող հայոց տունները գերծ կացուցանել շինութեան տուրքէ:

Քաղաքապետական ժողովը երկար խորհրդակցութիւններէ յետոյ յայտնեց թէ, չկրնար մշտապէս դործադրել այդ պահանջը. քայքայ քաղաքար կը շնորհէ անոնց միջին հիմայ ունեցած այդ պարագը, որ կը հասնի 1800 սրկն. ոսկիի:

Մ. ՊՈՒՇԷՆ ՄԵԿԱՍՏ

Ընդհ. ապահովութեան տնօրէնը Մ. Պուշէն, 20 Օգոստոսին արձա-կուրդով մեկնեցաւ Բարիկ:

Խ. ԱՇԽԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Վերջին անգամ նոր վկայ մը ներկայացած է հարցաքննիչ դատաւորին և յայտարարած թէ ինք լսած է քանի մը անգամ որ իրենք ըս-պանած են իրարի վրայ և թա-ղած Մար-Շախա վանքին մօտ: Այս վկային անուանը բոլորովին զաղտնի կը պահուի:

ԵՐԵՍՓ. ԱՆՏՐԷ ՊԵՐՔՈՆ

ՄԵԿԱՆՑԱԻ

Յիւս. Երեսփ. Անտրէ Պերթօն, որ Պէյրութ եկած էր ամբաստանեալ համայնավարները պաշտպանելու համար. 19 Օգոստոսին եաֆա մեկ-նեցաւ, անկէ Բարիկ երթալու հա-մար:

Ան մեկնելէ առաջ աւագուտի բանալը այցելած է և տեսակցած այն համայնավար շէֆին հետ, որը ձերբակալուած էր Շտորայի մէջ:

Մ. Պերթօն իր ընկերներուն յայ-տարարած է թէ քանի մը ամիսէն հաւանականաբար կրկին գալ Սու-րիա, բանախօսութիւններ տալու համար:

Կը գրէ «Երբեք»:

ՄԵՎԱԼԻ ԵՒ ՀԱՅՏԻՍԻ ԳԵՂԵՐԸ

Մեվալի և Հատիֆի ցեղերուն միջև տիրող անհամաձայնութիւնը վերջապէս կտրուեց տեղի տուաւ թա-վիւ եւ Հալիպ գիւղին մօտ Մեվալի ցեղին կարգ մը ձիաւորներ յարձա-կեցան Հատիֆի ցեղին վրայ, որոնք ինքնապաշտպանութեան դիմեցին: Զինուորական մամուլներով սկսուած այս կռիւն մէկուկէս ժամ տեւեց: Հրացանագործութիւններն ու կռուող-ներն ձայները չընկալանքէն լսուե-լով փրանաւ. զօրքեր հասան և կե-ցուցին պատերազմը: Մեվալիներէն երկու հօգի մեռան իրենց ձիերով: Այդ շրջանի ժողովուրդը ահ ու դողի մէջ է:

Մեվալի ցեղապետը առջի օր Հալիպ հասաւ դատ բանալու հա-մար Հատիֆի ցեղապետին դէմ:

ԸՄՊԵԼՆԵՐՈՒ ԳԻՆԸ

Նոր պաշտօնագրի մը համաձայն միջին Լիբանանի և Գէորտանի շըր-շաններուն մէջ օդին քիթն պիտի օրօք 20, իսկ գիւնինը 10 շըրշ Սուրիական:

«ԼԻԲԱՆԱՆ»

Օրական տասնեակ նամակներ կը հասնին մեզ, որոնք կը գիտցու-նեն թէ «Լիբանան» օրին չի հասնիր և կամ թէ շարաքներ չարուեսակ չեն ստանար: Մենք, ինչպէս որ քանիցս յայտարարած ենք, թերթե-րը կ'ԱՆՆԱՆՈՒՄԱՐՈՒՄ և Ուրբաթ օրերը, կէսօրէ վերջ ժամը 5-6: Այս մասին մեր նամակատանց տնօրէ-նութեանց մօտ ըրած բողոքները ցարդ անպատասխան կը մնան, թէ և չենք դադրած ամէն հետապնդում ընելէ:

Լուսարանելու համար խնդրել, ըսենք թէ նամակատանց մէջ աշ-խատող երբեմն գաշնակ պաշտօն-եաներ, հրահանգուած իրենց կեդ-րոններէն, սկսած են այդ ձեւով գաղափարական պայքար մղելու մեր թերթին դէմ:

Յաջողութիւն... ուրեմն:

ՄԻ ԲԱՋԱԼԵՐԻՔ

ԶԻՐ ԹԻՐԹ ԿԱՐԴԱՅՈՂՆԵՐԸ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչ կ'առաջարկէ Գերմանիա

ՊԵՐԼԻՆ, 17.— Գերմանական կառավարութիւնը մտադիր է ա-ռաջարկել դաւանակութիւն մը ընդմէջ Անգլիոյ, Ֆրանսայի, Դե-մանիոյ, Իտալիոյ եւ Ռուսիոյ. որով անոնցմէ իւրաքանչիւր յանձնա-ռու պիտի ըլլայ միւս դաւանակից պետութեանց դէմ բան մը չընել և մեծել կնքելու համաձայնութիւն մը եւ կամ մասնակցելու դա-ւանակցութեան մը, ուրմէ ուղղուած ըլլան այդ պետութեանց դէմ: Յանձնառութիւնները որոնք կը բղիթին այս նոր ուխտէն թէեւ բա-ցասական, բայց այնուամենայնիւ անոնք այն օգուտը պիտի ունե-նան որ վստահութիւն պիտի հաստատեն մեծ պետութեանց միջեւ՝ անհրաժեշտ ելեմսական եւ ճնշեալ համագործակցութեան հա-մար, որուն պէտքը ակնհերե է: Կը կարծուի թէ Անգլիա եւ Իտալիա հանութեամբ պիտի ընդունին այս նոր առաջարկը, մինչ Ֆրանսա եւ Ռուսիա վերապահութիւններ պիտի դնեն:

Ֆրանսայի Ելմտական Նախարարին

Յայտարարութիւնները

ԲԱՐԻՉ, 18.— Ելմտական Նախարար Մ. Ֆլանսէն յայտարարեց թէ Ելմտի ծրագիրը չնշուած չէր, այլ պարզապէս առկախուած: Ֆրանսան, յարեց, իր հասուցումներէն ձեռք բաւած չէ: Ամերիկայի ելմտական նախարար Մ. Մըլլոն Նիւ Եօք մեկնեցաւ:

Մ. Լիթվինով Էնկիւրի պիտի այցելէ

ՊՈԼԻՍ, 17.— Ռուսական դեսպան Մ. Սուրից որ Ռուսաստ-նէն նոր վերադարձած էր Կազի փառային ներկայացաւ: Սովիէթա-կան արտաքին գործոց փոխէր Մ. Լիթվինով Հոկտեմբերին Էնկիւրի պիտի այցելէ:

Արարական միութեան փորձեր

ԴԱՄԱՍԿՈՍ, (Ս. Փ.).— Շատ յամառօրէն քննող գրայքի մը համաձայն, Հիմազի եւ Նեփի քաղաւոր Իպիստուս եւ կարգ մը իսլամ աբիէթներու պետքը ձեռնարկներ կը կատարեն, արաբական միութիւն մը կազմելու համար: Եթէ այս ձեռնարկը դրական ա-րդիւնք մը տալ, ամբողջ Արաբիան, մէջն ըլլալով նաեւ Սուրիան եւ Պաղեստինը, միակ մեծ պետութիւն մը պիտի ըլլայ մէկ քաղաւորի իբխանութեան տակ:

Կը կարծուի թէ այս նոր ձեռնարկին մէջ կարեւոր դեր մը պի-տի կատարեն արաբ զանազան աբիէթները, որոնք միլիտար ան-ձերէ կը բաղկանան:

Կ'ըսուի նաեւ թէ միութեան նախաձեռնողները պիտի ուզեն որ Իսլամի Ֆէյսալ քաղաւոր իրենց զուլալ կանգնի:

Եթէ ձեռնարկը յաջողի այն առեւ իսլամ պիտի ըլլայ իսլա-մի Արաբիայ Հայեան եւ հոգաւոր պետութեանց կայսրութեան մասին:

Կը գրէ «Ազգաբար»:

Ֆրանսական ոսկրին մթերքը

ԲԱՐԻՉ, 15.— Ֆրանսական ազգային պալմային ոսկրի մթ-թերքը, Օգոստոս 7ին, կը հասնէր 5,568,000,000 Ֆրանկի:

ԲԱՐԻՉ, 17.— Իւրաքի Ֆէյսալ թագաւորը անպաշտօն կերպով հոս ժա-մանց: Յիշեալը չորեքշաբթի օր Ռամադանի մէջ Հանրապետութեան Նախագահին հետ պիտի ճաշէ:

= 324 =

է որ կը կատարեմ...

Եւ սակայն կրնայ ըլլալ որ Պ. Շանթըքօքի սե-նեկապանն ալ վերադարձուած ըլլայ իր կարգին:

Բայց վարպետս որ ինծի յանձնեց այս նամակը ձեզ բերելու համար, ոեւէ ակնարկութիւն չըրաւ անոր մասին...

Ու վարկեան մը լուել յետոյ, աւելցուց.

— Ահա այս է իմ բոլոր գրիցածս:

Յանկարծ, Գօլթէ գոչեց.

— Կը ստէք:

Սալթէթով մարդը, որ կը թուէր ամենեւին այդ տեսակ պատասխանի մը չըսալու, ուզեց բողոքել:

Բայց գաղտնի ոստիկանին աղջիկը, զինքը յատ-կանող արիւնքեամբ մը, կրկնեց.

— Կը ստէք: Հայրս չէ այս նամակը գրողը:

Ու բռնելով հեռաձայնի գործիքը, որ իր մօտը կը գտնուէր, ուզեց առնել զայն:

Բայց ժամանակ չունեցաւ նէ:

Սալթէթով մարդը արթնանակ մը քաշելով գր-պանէն փողը Գօլթէին ուղղեց...

Ու մինչ Մարի Ժան քարացած կը կենար, գե-հիկ ու սպառնական ձայնով մը կը գոչէր.

— Երկուքդ ալ ձեռքերնիդ վեր, եթէ ոչ խօսե-ցնել կուտամ գնդակներս:

Մարի Ժան հնազանդեցաւ. իսկ Գօլթէ անվեհեր կեցուածքով մը բազուկները կուրծքին վրայ խաչա-ձեւելով, յարեց.

— Լ'ալ կուգէք ինձմէ:

— Պիտի ըսեմ զայն... պատասխանեց Սալթէ-թով մարդը շարունակելով սպառնալ իր գէշքովը Շանթըքօքի աղջկանը:

ԼԻԲԱՆԱՆՑԻ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂ

ՃԻՊՐԱՆ - ԽԱԼԻԼ - ՃԻՊՐԱՆԻՆ

Մ Ա Ր Մ Ի Ն Ը Պ Է Յ Ր Ո Ւ Թ Ի Մ Է Ջ

ՅԱՐԳԱՆՔԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՑՈՅՑ

ՄԵԾ ՍԳԱՋԱՆԴԵՍ ԿՐԱՆ - ԹԵԱԹՐԻ ՄԷՋ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ԽՕՍԻ

Երէկ, 21 Օգոստոս, կէսօրէ վերջ ժամը 4-ին, Յալլաշի Սէնտա նա-ւով Պէյրութ հասաւ Լիբանանցի մեծանուն գրող Ճիպրան խալիլ Ճիպրանին մարմինը: Ամբողջ քաղաքը, առանց դաւանական խտրութեան, կը մաս-նակցէր թափօրին: Նաւահանգիստէն Լիբան Եւ Ճիպրան եկողներ, անանցա-նելի բազմութեան տողանցք մը կար: Պետացան և ազգային շատ մեծ պա-տիւններ եղան: Ամէն համայնք իր մասնաշառուկ մասնակցութիւնը բերած էր: Միայն իր բացակայութեամբ կը փայլէր մեր հայ համայնքը: Կաթողիկէ հայոց գրեթէ բոլոր քահանաները տողանցքին կը մասնակցէին: Լուսաւոր-չական հայերէն միայն երկու քահանաներ կային, իսկ միութիւններէն՝ լոկ Բարեգործականի մէկ սուրկայացուցիչը: Երբեք ճիպրան ճիպրան ճիպրան: Ոչ մէկ հայ կը տեսնուէր այդ ժողովուրդը բազմութեան մէջ: Կարգադիր յանձնախումբին կարեւոր անդամներէն մին շատ իրաւամբ գրտել կուտար թէ, հայերը պոյֆօք ըրած են Լիբանանցի մեծանուն գրողին մարմինը ըն-դունելու: և անկէ աւելի նախատիք չէինք կրնար սպասել մեր հայ «նայրենակիցներ»էն: Կըսէր խոր սրտմտութեամբ:

Ո՛ր էին մեր ազգային շահերէ, արժանապատուութիւնէ, բարի գրաց-նութենէ ճանող «փրկիչներ»ը, հերոսները, մարտականները: Ո՛ր էին մեր սիրելի մը տէրտէրները, տիրացուները:

Գիշերը, ժամը 9-ին կրան - Թաթրի մէջ տեղի ունեցաւ մասնաւոր սգահանդէս՝ նախագահութեամբ, Հանրապետութեան Նախագահ Վսեմ Շա-րըլ Տըպպիւի: Բանախօսութիւններ եղան համայնքներու, միութեանց, պե-տական անձնաւորութեանց եւ մամուլի ներկայացուցիչներու կողմէ:

Հոս ալ հայերը կը բացակայէին բացարձակապէս. միայն Բարեգործակա-նի կողմէ կը ներկայանար Տօքթ. Միսակ Տազէնեան:

Մեծանուն գրողին մարմինը այսօր, ժամը 7.30-ին մեծ թափօրով փո-խադրուեցաւ իր ծննդավայրը՝ Պըշարի:

Հնդիկներուն եւ իսլամներուն միջեւ

ՊՕՄՊԷՅ, 14.— Մեծ կռիւ մը ծագեցաւ Տէրա Իսմայիլ Խանի հնդիկներուն եւ իսլամներուն միջեւ: Երեւ հոգի սպաննուեցան եւ շատեր եւս վիրաւորուեցան: Հնդիկներու պահկանող 400 զուներ հրկիզուեցան:

Պայթիւն Յիօրայի մէջ

ՄԱՔԱՕ (Զիմաստան), 14.— Պիօրայի վառօթի մթերանոցը պայ-թեցաւ: 26 հոգի մեռան եւ 92 հոգի վիրաւորուեցան: Վնասները շատ մեծ են, բոլոր տուններն ալ սարսեցան: Հեռագրաթելերը եւ թե-լեֆօնի գիծերը կտրուեցան:

Վնասը կը հասնի 200,000 սրերիմի:

Գերմանիոյ կարն պայմանաժամով

պարտները

ՊԱԼ, 15.— Պալի մէջ գումարուող ամենազգի պանքաներու ներկա-յացուցիչներէն կաշմուած միջազգային Յանձնաժողովը որ պաշտօն ունի քննել Գերմանիոյ տնտեսական կացութիւնը, տեղեկացաւ թէ Գերմանիոյ կարն պայմանաժամով ունեցած պարտքերուն գումարը կը հասնի 530 միլիոն սթերլինի հսկայ գումարին:

= 321 =

— Մառի-Ժան կը ճաննա՞ք հօրս գիրը:

— Ո՛հ, առ... օրիորդ, և շատ լաւ կերպով... Նայնիսի կրնամ յայտարարել թէ հայրս հատ գրու-թեան մէջէն կրնամ զատել իր գիրը:

Գօլթէ աւելի ևս ծռելով դէպի խոհարարանին, որ մօտեցած էր իրեն, ձայնը ցածցնելով ըսաւ.

— Գացէք խնդրեցէք այդ կառուղիդէն որ պա-հարանը ցոյց տայ ձեզի... Եւ եթէ հօրս գիրն է կը թողուք որ ներս մտնէ... որովհետեւ կրնայ ըլլալ որ հայրս պէտք ունենայ ինծի և կամ ոեւէ արկած մը պատահած ըլլայ:

— Իրաւունք ունիք, օրիորդ... Սոյդ կերպով կրնաք վստահ ըլլալ:

Մառի-Ժան վերադարձաւ կառուղիին քովը որ կ'սպասէր վանդակորմին առկա... Եւ վճռական ե-ղանակաւ մը ըսաւ.

— Կ'ենթադրեմ թէ չինծաւ պատմութիւններ չեն ըսածներդ... միայն թէ, մասնաւոր այսպիսի յառաջացած ժամու մը պէտքէ գուշութիւններէնք առնել...

— Հակառակ չեմ պնդեր, բարի տիկին... Նայն-իսի շատ բնական կը գտնեմ զայն:

— Կրնա՞ք արդեօք այդ նամակին գէթ հասցնէ ցոյց տալ ինծի:

— Բնականաբար:

Ու առանց ձեռքը տալու նամակը, ներս երկա-

րեց զայն վանդակորմին ընդմէջէն:

— Լաւ մը չեմ կարող տեսնել յարեց Մարի-

Ժան:

— Կամահանօրէն, կառուղիդ լուցկի մը վառեց ու պատուհանին մօտեցուց ըսելով.

— Կ'ուզէք տեսնել թէ ի՞նչպէս Գ. Շանթըքօքը

Իսլամի օրմուային ընկերակցութիւնը
Հիմնադրուած է 1908-ին Օգոստոսի 15-ին Պալմային օրմուային ընկերակցութիւնը
Հիմնադրուած է 1908-ին Օգոստոսի 15-ին Պալմային օրմուային ընկերակցութիւնը
Հիմնադրուած է 1908-ին Օգոստոսի 15-ին Պալմային օրմուային ընկերակցութիւնը

Ս Ե Ի Օ Ր Ե Ր

Կ Ե Ս Ա Ր Ի Ո Յ Ն Ա Խ Ճ Ի Ր Ն Ե Ր Ը

Է Ջ Ե Ր Օ Ր Ա Գ Ր Է Ս

Դրեց՝ ՀԱՅԿ ՂԱԶԱՐԵԱՆ

Երթալով անկի զուարթացաւ ու իր անձնիքը կանչելով ըսաւ, որ Լեւոն անուն հայ պատանի մըն էր։
«Լեւոն ալ կերակուրիս բեր»
Հուսով սեղանի վրայ մաքուր ծածկոց մը փռուելով կերակուրը դրուեցաւ։ Ես առիթը չանգործեցի և համար ըսի։ Պէ՛շ հիմա դուք հանգիստ մը պիտի պառկե՛ք ձեր անկողինը մէջ, բայց ես եւ իմ ընկերներս ոչ անկողին և ոչ ալ վրան ունինք մէջը պատսպարուելու, արդեօք կարելի չէ քանի մը հոգիներու վերջապա մը տալիք, որ Զահէ՛ք երթալով մեր պէտքերը հագայինք։ Եթէ ոչ ամբողջ պիտի հրաւիրանաք բաց օդին մէջ։
Բաւական մը մտածել վերջ ըսաւ «չառ լաւ վաղը ես և ձերն երկու հոգի միասին երթանք Զահէ՛ք ու գիշեր մը հոն պառկինք և դուք ալ ձեր առնելիքները առէք» արդէն իմ

ալ ուզածս այս էր ուստի քիչ վերջ հրաժեշտ առնելով գացի ընկերներու մօտ, որ Համբար Տէպէեան, Արամ Մնտիկեան, Փոքրատես Ժամկոչեանի քանի մը կտոր քիթմ եւ այլ լաթերէ ձեւացուցած վրանի մէջ նստած զիս կապաւէին։
Երբ հաղորդեցի յաջողութիւնս, բոլորը ուրախացան քանի որ ոչ ոքի թող չէին տար վրաններու չըջանալէն հեռանալու, մենք Զահէ՛ք պիտի երթայինք ան ալ «Մուսայէտ»ի հետ միասին։
Հոն գտնուող ընկերներով կէս գիշերուան ժողով մը գումարեցինք «առանց առնելու գումար»։ Ուստի ընկերներ իմ և Շապուհ Յրէնկեանի «Մուսայէտ»ի հետ Զահէ՛ք երթալով։
Թաղարդ առաւօտ «Մուսայէտ»ին քով երթալով որոշումնիս հաղորդեցի։ «Երբեք պատրաստ եղէք կէս օրէն վերջ թրէնով երթանք» ը-

սաւ։
Բոլոր ընկերները սկսան ապրանք տալու և ես շարունակ կը նշանակէի յանձնակատարի մը նշման։ Վերջապէս ժամը հասաւ կառայուն մը պիտի մեկնէր։ Ես և Շապուհ Յրէնկեան «Մուսայէտ»ը կապաւէինք անհամբեր։ Եկաւ և առաջին կարգին մէջ տեղաւորուեցանք «Մուսայէտ» մի քիչ անգլիներէն զիտնալու սկսաւ պատմել ինչ սէվըրաթի ընդհ. տնօրէն հազարապետ շէլալի հետ, մեր մասին ունեցած խօսակցութիւնը։ Միւս կողմէն Շապուհ սկսաւ զգոգնութեան նշաններ ցուցնել մեր խօսակցութենէն կարծելով թէ իր մասին բան մը կ'սկիւնք։
Վերջապէս ես իրեն դառնալով բացատրեցի մեր խօսակցութեան արդիւնքը որ ինչպատ մեզի էր։
Զուարթ խօսակցութիւններով հասանք Մուսայէտ, ուր իջնելով կտոր մը առինք ու բարձրացանք Զահէ՛ք։ «Մուսայէտ»ը մեզ տարաւ առաջնակարգ Օթէլ մը, բարձրադասարան նոյն օթէլն էին նաեւ Պրն. Արմինակ Մազլումեան (Պարոն) իր և իր եղբայր Պարոն Օննիկի ընտանիքով միասին։
(21)

LE DANUBE

SOCIÉTÉ ANON. D'ASSURANCES GÉNÉRALES

Fondée à Vienne en 1867

Տ Ա Ն Ի Ի Պ

Ընդհանուր Ապահովագրական

ԱՆՈՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի ՎԵՆԵԱ 1867-ԻՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ	Ոսկի Թրք.	36,000,000
ԱՊԱՀՈՎՈՒԱԾ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ	»	218,000,000
ԻՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵՆԷՆ Ի ՎԵՐՎՃԱՐՈՒԱԾ	»	388,000,000

Տ ա ն ի ւ պ ի

Աւերահաճանք ապահովարուրերը, ամենամաքաւաւոր պայմաններով կ'ապահովեն կեանքի եւ աւերահաճանք ապահովագրութիւններ, ինչպէս նաեւ արկածի հետեւանով ամբողջական եւ մասնակի նկատող վիճակի մէջ գտնուողներուն եւ ճիւղանդուրեան հետեւանով ամբողջ անձանց ապահովագրութիւնները։

Օ Թ Է Լ Ա Լ Է Մ Պ Ի



ԱԼԷՄՊԻ ՓՈՂՈՑ
ԹԷԼԵՖՈՆ 622
Հնազոր
HOTEL ALLENBY

Հայկական նոր օթէլ, անուանին չափ փառաւոր, անբաղադատելիօրէն մաքուր, շքեղ տեսարան, բոլոր սենեակները փողոցի վրայ, խնամուած սպասարկութիւն։
Տէր և Տնօրէն՝ ՎԱՀԱՆ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ և Ժ. ԱՐԷԼԵԱՆ

Գ ո Ր Ժ ա ծ Ե ց Է Ի

Եագուպեան Եղբայր և Գապայան Ընկերութեան Առողջապահական, խնամքով պատրաստուած և զիւրաքնի սրկառնութիւնը, որոնք օժտուած են անբացելի առաւելութիւններով։ Դամասկոսի միակ Հայկական Սրկառնութիւնը Գործարանը կատարելագոյն գոհացում կուտայ ծխախոտներու պահանջին։
Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք,
ԵԱԳՈՒՊԵԱՆ ԵՂԵՐԱՐ ԵՒ ԳԱՊԱՅԱՆ ԸՆԿ.
Հասցէ, ՀԱՐՔ-ԷԼ-ՋԵՆԵ քիւ 2 Դամասկոս

Տօք. Յակոբ Վարդանեան

ՎԱՅՅԱԼ ԱՎԱՄԱՐՈՅԺ - ՎԵՐԱՐՈՅԺ

Իր քրոնիքը փոխադրած է Սալիկէ, Շուհեաւ, մզկիթի կից ճիշդ թրամվայի գծին վրայ թիւ 171։
Ամէն օր կէսօրէ առաջ ժամը 8-էն մինչև 12 կը դարձանէ։ Երեսօրէ, առաւօտեայ և բերին վերաբերեալ ամէն տեսակ հրահանգներու ամենավերջին մեթոտներով երկարական մեքենայով։
Կը պատրաստէ ոսկիէ և ոսկրէ ազդանք։
Յրանաւական և Ամերիկեան Որոտեմ Պրիշինը։
Կէս օրէ վերջ ժամը 1-էն մինչև 6. Խորապ թիւ 270, Դամասկոս։

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Պէյրուսէն Մանուէլ Պոյաճեան կը փնտէր իր եղբայրը Կալոս Պոյաճեանը մօտ 30 տարեկան։ Կօրը անունը Յակոբ, մայրը՝ Դրվանտա, բնիկ Ենիթէ Գալացի։ Ամուսնացած Չաքմագճեաններու աղջկան հետ։ 1920-ին Կիլիկիայէն մեկնած է Եգիպտոս։ Ուր հասցին էր Սուէ-էլ Աթթին Նօ 3։ Դիտցունել «Լիբանան»ի հասցէով։ Դիտցունողին կարեւոր նուէր։
4-6

Պէյրուսէն Մանուէլ Պոյաճեան, Կալոս Պոյաճեանի եղբայրը, 30 տարեկան է։ Կօրը անունը Յակոբ, մայրը՝ Դրվանտա, բնիկ Ենիթէ Գալացի։ Ամուսնացած Չաքմագճեաններու աղջկան հետ։ 1920-ին Կիլիկիայէն մեկնած է Եգիպտոս։ Ուր հասցին էր Սուէ-էլ Աթթին Նօ 3։ Դիտցունել «Լիբանան»ի հասցէով։ Դիտցունողին կարեւոր նուէր։

Ե Ր Թ Ե Ի Ե Կ

Ն Ա Ի Ա Յ Ի Ն

ՆԱԻԲ	ԿԸ ՀՍՄԻՆ	ԿԸ ՄԵԿԻՆ
Անկթոր. —	4 Օգոստոս	5 Օգոստոս
Լամարթի. —	18 »	19 »
Սիւսեան. —	20 »	21 »
Անկթոր. —	1 Սեպտեմբեր	2 Սեպտ.
Մարիթի փաշա. —	8 »	10 »
Լամարթի. —	15 »	16 »
Փաթիւ. —	20 »	21 »
Շանթլի. —	22 »	24 »
Անկթոր. —	29 »	30 »

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ

	Կը հասնի	Կը մեկնի
Պէյրուս. —	7.07-13.15-22 09	7.08-13.16-22.11
Զահէ. —	10 30-16.10- 2.58	10.33-16.13- 3.08
Բայազ. —	10 50-16.30- 3.28	11.15-16.42- 3.33
Դամասկոս —	14.30-19.37- 7.	14.45-19.52- 7.13
Պալապէ. —	11.49-15.26-	11.52-15.29
Հոմա. —	12.25-14.02	12.50-14.15
Հոմա. —	15 20-15.29	15.28-15.37
Թրիփոլի. —	17.25	8 50
Հալէպ. —	18 40 (19.01)	7.40

Սակարան - Պէյրուս

21 Օգոստոս 931

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՆՔԱՅԻ ՀԱՇՈՎ

(Ս Ի Կ Ե . Դ Ր Ա Մ)

Ձեւեր	Գնում	Ծախում
Լոնտոն	Ա. Ո.	619 60
Պաղեստին	Գ. Ո.	619 25
Եգիպտոս	Ե. Ո.	635 50
Նիւ-Եօրք	Տօլար	127 55
Իտալիա	Լիր	6 70
Ջուրիքիւ	Չ. ֆր.	25 05
Պէլէքա	Գէլկա	17 90
Հոլանտա	Գլ.	51 50
Բրազիլ	Դր. 2.	3 80
Մատրիտ	Բէս	12 75
Սթամպոլ	Օսմ. Ո.	60 75
Պերլին	Բ. ֆ.	

Դրամներ

Եգիպտ. Թուրք Ոսկի	634.50
Անգլիական »	618.50
Պաղեստինեան »	618.50
Թրքական »	59.75
Ամերիկեան Տօլար	127.10
Իտալական Լիր (100)	665.—
Յունական Ժրախի (100)	160.—
Պանք Օթթոման	150.—
Անգլիական Ոսկի Հնչ.	618.—
Օսմանեան »	553.—
Ֆրանսական »	480.—
Մէքսիկ. Ագոստ	32.—

= 322 =

գիւրն է։
— Ճիշդ գուշակեցիք, պատասխանեց խոհարարուհին, աչքերը խոշոր խոշոր բանալով։
Ու գրեթէ անմիջապէս յետոյ աւելցուց։
Ճիշդ անորն է։ Ինծի հետեւեցէք։
Պարտէզէն անցնելով, Տիկին Կոթրէ աշխատանքը առաջնորդեց զայն, ու Գոյէթ իրենց կ'ըսպասէր։
— Օրիորդ Շանթլիքօքը դուք էք հարցուց կառուղիդ, որ ուրիշ մէկը չէ թէ ոչ սալօթիքով մարդը։
— Այո, ես եմ պատասխանեց երիտասարդ աղջիկը բնազդական կասկածով մը դիտելով իր խօսակցիցը։
— Արդարեւ Պէլէքայի տորանեակը հակառակ ինքզինքը համակրելի դարձնուաւ համար թափած ջանքերուն զտահուսթիւն չի ներշնչող կերպարանք մը ունէր։
Թանձամ, Գոյէթ առաւ երկտողը զօրիւրն կ'երկարեր...
Ձնեց հասցէն... Մառի ժան չէր սխալած. ուղղակի իր գիւրն էր։
Բացաւ պահարանը, ու նամակը հանելով մէջէն բարձրաձայն կարգաց յայտնապէս վարանոտ ձեռքով մը գրուած սա քանի մը բառերը։
Սիրելի զաւակս,
Ինքնաւարձի բաւական ծանր արկած մը ունեցայ... Շուտով մօտս եկուր։
ՇԱՆԹԼԻՔՕՔ
Մառի ժան, խնայեղ մօտեցաւ Գոյէթի օր չափապէս խաղաւած էր։

= 323 =

— Ուր կը գտնուի հայրս։
— Մանթի հիւանդանոցը... ուր փոխադրեցին զայն։
— Ուրեմն, ծանրապէս վիրաւորուած է։
— Սրունքին մէկը կտրուած է։
— Աստուած իմ...
Սալթիքով մարդը կանխատեսելով դեռատի աղջկան իրեն ուղղելիք հարցումները, շարունակեց։
— Նամակատունը գոց ըլլալուն, Պ. Շանթլիքօք ինքնաշարժ մը խնդրած էր ան կառուարան տիրոջմէն ուր կ'աշխատէր եւ, որպէսզի կարելի եղածին չափ շուտով տեղեկանաք արկածին... Ինքնաշարժը հոս է ու անմիջապէս կրնամ Մանթի փոխադրել ձեզ։
Գոյէթ ուղղակի մարդուն երեսը նայեցաւ...
Կասկած մը եկաւ անցաւ իր հոգեւոյն մէջէն... Արդարեւ, ինչելով թէ հայրը Կոթրէի հետ մեկնած էր, նէ կը մտածէր թէ, ինչու համար իր այդքան լակոնական գրուածքին մէջ, Շանթլիքօք օտէ ակնարկութեւն չէր ընէր անոր մասին... Անշուշտ փոքրիկ զաւակէք մը կար այդտեղ որ լուսաբանութեան կը կարօտէր... Ու առանց ակնարկը հեռացնելու կեղծ կատուղիղին վրայէն, յարեց։
— Հայրս առանձին չէր, իր սենեկապանը միասին գացած էր։ Ի՛նչ պատահեցաւ անոր։
Սալթիքով մարդը արտեւանուէրներու անշուշտութիւն թարթում մը ունեցաւ, որ սակայն չի վերապահեց զաղտնի ոտիկանապետին աղջկան փորձառու աչքէն։
Յետոյ, ձայնը մեղմացնելով, պատասխանեց։
— Ատիկա չեմ գիտեր, օրիորդ։ Այդ մասին օտէ բան չեմ կարող ըսել ձեզի։
Ես միմիայն ինծի աքուած յանձնադրութիւն